

9065



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝  
Երջակա միջավայրի նախարար  
Հակոբ Սիմիոյան

«13» 08 2024թ.

## ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԿՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ N 163 - 24

Նախաձեռնող՝

«Ջինջ» ՍՊԸ

ք. Երևան, 0052, Քանաքեռ 11-րդ փող., պ. 57

Գործունեությունը՝

Գավառի կեղտաջրերի մեխանիկական մաքրման  
կայանի արդիականացում

Առդիր՝ 7 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ  
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 163 - 24

« 13 » օգոստոսի 2024թ.

**Գավառի կեղտաջրերի մեխանիկական մաքրման կայանի արդիականացման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն**

Նախաձեռնող՝	«Զինջ» ՍՊԸ
Փաստաթղթի տեսակը՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն
Գործունեության կատեգորիա՝	«Բ» կատեգորիա
Տեղադրման վայրը՝	Գեղարքունիքի մարզ, Գավառ համայնք, Արծվաքար բնակավայր

**Ներածական մաս.** ՇՄԱԳ հաշվետվությունը կազմվել է «Սևանա լիճ - EU4 SEVAN» ծրագրի շրջանակներում Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության (GIZ) հայաստանյան գրասենյակի և «ԶԻՆՋ» ՍՊԸ-ի միջև կնքված 83426286 պայմանագրի շրջանակներում մշակված աշխատանքային նախագծի հիման վրա: Նախագծի նպատակն է արդիականացնել Գեղարքունիքի մարզի Գավառ քաղաքի կոյուղաջրերի մեխանիկական մաքրման (ԿՄԿ) կայանը, իրականացնել ավելի խորը մեխանիկական մաքրում:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի /ՀՕ-110-Ն/ համաձայն՝ նախատեսվող գործունեությունը հանդիսանում է Բ կատեգորիայի գործունեության տեսակ:

Գավառ քաղաքի ԿՄ կայանը կառուցվել է 2012 թվականին՝ Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի հետ համագործակցության շրջանակներում՝ աշխատանքային նախագծին տրամադրված պետական բնապահպանական փորձաքննական դրական եզրակացության հիման վրա:

**Նկարագրական մաս.** Գործունեության ենթակա տարածքը գործող ԿՄԿ-ի տարածքն է, որը գտնվում է Գավառ քաղաքից դեպի արևելք՝ մոտ 3.6 կմ հեռավորության վրա՝ Արծվաքար բնակավայրի վարչական տարածքում՝ ծովի մակարդակից 1920 մ բացարձակ բարձրության վրա:

Նախատեսվող գործունեության տարածքը լեռնագրաֆիական տեսակետից տեղադրված է Գեղամա լեռնաշղթայի արևելյան լանջին: Երկարաբանական կառուցվածքին մասնակցում են հրաբխային և հրաբխա-նստվածքային ապարները՝ պարֆիրիտներ, տուֆաբրեքչիաներ և այլն, պլիոցեն միոցենի հասակի հրաբխային առաջացումներ:

Սեյսմատեկտոնական տեսակետից շրջանը և տարածքը բնութագրվում է տեկտոնական բազմազան ճևերի առկայությամբ, բարդացված խզումային և ծալքային կառույցներով: Շրջանը գտնվում է 1 սեյսմիկ գոտում՝ գրունտների













Մաքրման ենթակա կեղտաջրերը զամբյուղի միջով անցնում են ներսից դեպի դուրս: Կախված կիրառության հատուկ պահանջներից՝ հորիզոնական թմբուկը ծածկվելու է ցանցով, սեպային մետաղալարով կամ ծակոտկեն թիթեղով: Մինչ կեղտաջրերը բաց ճակատային մասով անցնելու են ցանցի զամբյուղի մեջ, պինդ մասը մնում է թմբուկի ներսում: Առվակի և արջևի զամբյուղի բացվածքի միջև հատուկ մեկուսացումը կանխում է անմշակ կեղտաջրերի անցումը զամբյուղի միջով: Թմբուկի մակերեսին նստած պինդ մասնիկները հանգեցնում են մակերևույթի աստիճանական խցանման: Արդյունքում ֆիլտրի դիմաց ջրի մակարդակը բարձրանում է: Երբ ջրի մակարդակը հասնում է առավելագույն սահմանվածին, ֆիլտրի զամբյուղը պտտվում է իր առանցքի շուրջ՝ մաքրելով իր մակերևույթը: Դրա վերևում ցայտային ծայրափողոցակը ջուր է ցողում թմբուկի մակերևույթի վրա՝ հեռացնելով պինդ նյութերը և լվանում դրանք թմբուկի զամբյուղի ներսում գտնվող տաշտակի մեջ, որտեղից թափոնները թափվում են ծանրության ուժով և ինքնահոս հեռանում դեպի բետոնե առվակի հարևանությամբ նախատեսված տիղմի/շլամի ստորգետնյա բետոնե խցիկը:

Կեղտաջրերը թմբուկով հոսում են ներսից դուրս: Բռնվածքը հանվում է ներքին տաշտակից ներհոսքի ուղղությամբ՝ ինտեգրված լվացման առվակի միջոցով և փոխանցվում է հոսքով ներքև գտնվող մաքրման համակարգ: Ֆիլտրի զամբյուղի մաքրման համար պահանջվող ցողվող ջուրը ծառայում է նաև որպես լվացման ջուր: Շատ մեծ արդյունավետ ֆիլտրի մակերես և թողունակություն ստեղծելու համար հորիզոնական տեղադրված թմբուկի ֆիլտրը սուզվում է մինչև առավելագույն մակարդակը և աշխատում է 400 մմ ճնշման առավելագույն տարբերությամբ:

Ֆիլտրի բացվածքից ավելի մեծ մասնիկները չեն կարող անցնել ճաղերի միջով: Թմբուկային շարժիչը ուղիղ շարժիչ է: Փոխանցման շարժիչը մասամբ սուզված է, իսկ շարժիչը գտնվում է ջրի մակերևույթից դուրս:

Օպտիմալ թողունակության պայմանների համար բարձր ճնշման մաքրման համակարգը գծային շարժիչով և պտտվող ցողող էլեմենտով մաքրում է զամբյուղը կանխարգելիչ և ավտոմատ կերպով:

Huber Drum Screen LIQUID 0.2 մմ թմբուկային ճաղավանդակի տեխնիկական սլվյալները են՝

- հոսքի առավ. արագություն՝  $Q_{max} = 50$  լ/վ
- ԿՄ մուտքային կոնցենտրացիա՝  $cin, SS 350$  մգ/լ
- ցանցի չափը՝  $w = 0.2$  մմ
- թմբուկի տրամագիծը՝  $D = 1600$
- նյութը՝ 304L (1.4307) or equal quality
- ընդ.լայնությունը՝  $B \approx 1700$  մմ
- ընդ. բարձրությունը՝  $H = 2400$  մմ
- ընդ. երկարությունը (առանց հիմքի)՝  $L = 3485$  մմ:

Նոր կառուցվող մասնաշենքից հետո նախատեսվել է լրացուցիչ ջրաչափական հանգույց, տեղադրվող հոսքաչափը նախատեսվում է միացնել գործող ավտոմատ կառավարման SCADA համակարգին:





Շենքի օդափոխությունը նախատեսվում է ապահովվել պատերի մեջ տեղադրվող օդամղիչների միջոցով, իսկ ջեռուցումը՝ կենտրոնական ջեռուցման համակարգով՝ երկկոնտուրանի ջեռուցման կաթսայի միջոցով:

Ծրագրի շրջանակներում նախատեսվում է հողային աշխատանքների իրականացում: Հիմքերի տեղադրման համար կատարվելու է 1237.0 մ<sup>3</sup> ընդհանուր ծավալով հողային զանգվածի հանույթ: Հանվող՝ 277.5 մ<sup>3</sup> ծավալով հողային զանգվածը կտեղափոխվի համայնքապետարանի կողմից օրենքով սահմանված կարգով հատկացված վայր, մնացած մասը՝ կարճաժամկետ կպահվի շինարարական հրապարակում և կօգտագործվի որպես հետլիցք:

Հիմնական թափոնատեսակը, որը կառաջանա շինարարական աշխատանքների ընթացքում՝ կենցաղային (75կգ) և շինարարական (3.7տ) աղբն է:

«Վեոլիա Ջուր» ընկերության տվյալների համաձայն՝ ԿՄԿ-ում կեղտաջրերից առանձնացված աղբի տարեկան ծավալը կազմում է շուրջ 250 տոննա, որը տեղափոխվում է Գավառ համայնքի աղբավայր: Գործող կայանում կեղտաջրից կախված մասնիկների հեռացման արդյունավետությունը բարձր չէ, այն միջին հաշվով, կազմում է մոտ 48%, որը բավարար չէ լիարժեք մեխանիկական գործընթացի իրականացման տեսակետից: Արդիականացման ծրագրի իրականացմամբ մեխանիկական մաքրման արդյունավետությունը կհասնի մոտ 97%-ի:


Նախագծով նախատեսված Huber Drum Screen LIQUID 0.2 մմ թմբուկային ճաղավանդակը նախատեսված է գործող մեխանիկական ճաղավանդակներից անցած, ավելի մանր չափերի, նստվածքների որսման համար: Այն կարող է կեղտաջրից օրական հեռացնել մինչև 140 կգ նստվածք, որը բաղկացած է ավազից և հիմնականում անօրգանական այլ տարրերից (շլամ): Գավառի ԿՄԿ-ում մեխանիկական մաքրման արդիականացման արդյունքում տարեկան կհեռացվի մոտ 300 տ նստվածք, այդ թվում միայն նոր նախատեսված թմբուկային ճաղավանդակից՝ շուրջ 50 տ:

Շինարարական աշխատանքների, ինչպես նաև կայանի շահագործման ժամանակ առաջացած թափոնները՝ շլամներ, ավազ, հանքայնացված նստվածք, ակտիվ տիղմ և այլն դասվում են 4-րդ կարգի վտանգավորության դասին:

Շահագործման ընթացքում կոյուղու մաքրման կայանում առաջացած թափոնների հեռացումն իրականացվում է «Վեոլիա Ջուր» ընկերության կողմից՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, և ՀՀ կառավարության կողմից հաստատված ծրագրային փաստաթղթերին համապատասխան:

Գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցությունները հիմնականում կապված են /շինարարության և շահագործման/ լինելու քանդման, փորման, բեռնման, հողային, բետոնային աշխատանքների, հողային զանգվածների և թափոնների տեղափոխման, նյութերի օգտագործման, շինարարական տեխնիկայի, մեխանիզմների շահագործման, ճանապարհների ծանրաբեռնվածության, արտակարգ իրավիճակների առաջացման հետ: Շինարարական աշխատանքները համաձայն հաշվետվության տևելու են 6 ամիս:

Համաձայն հաշվետվության նախատեսվում են օդային ավազանի, հողային և ջրային ռեսուրսների աղտոտումից պահպանման, դրանց արդյունավետ օգտագործման, թափոնների կառավարման, աղմուկի մակարդակի, արտակարգ իրավիճակների ռիսկի





նվազեցմանն ուղղված բնապահպանական միջոցառումներ, որոնք ներառված են միջոցառումների ծրագրում և մոնիթորինգի պլանում: Այդ թվում՝

- շինարարության ընթացքում օդային ավազան փոշու արտանետումների քանակը նվազեցնելու նպատակով՝ ջրցանի կատարում օրական 2-3 անգամ,
- աղմկահարույց աշխատանքների իրականացում օրվա ցերեկային ժամերին,
- աղմուկի և թրթռումների մշտադիտարկումներ,
- սորուն նյութերի պահեստների ծածկում՝ համապատասխան բարձրության թաղանթով,
- սորուն շինարարական նյութերի և հողային զանգվածի տեղափոխում՝ փակ ծածկով մեքենաներով,
- հեղուկ նյութերի պահում հատուկ տակդիրների վրա՝ հնարավոր արտահոսքերը բացառելու համար,
- շինարարական աշխատանքներում ժամանակակից աղմուկի առաջացման ցածր ցուցանիշներ ունեցող տեխնիկական միջոցների ներգրավում, ինչպես նաև ապահովել դրանց տեխնիկական նորմալ վիճակով շահագործումը,
- շինհրապարակում քանդման և շինարարության ընթացքում թափոնների տարանջատում,
- մթնոլորտային օդի արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ,
- օգտագործված մեքենայական յուղերով ու քսայուղերով հողերի հնարավոր աղտոտումից պահպանելու նպատակով՝ հողերի մշտադիտարկում,
- շինարարության ընթացքում աշխատանքի անվտանգության և արտակարգ իրավիճակների պահպանում և այլն:

Բնապահպանական միջոցառումների համար, ամբողջ շինարարության ընթացքում, նախատեսվել է հատկացնել 360 000 ՀՀ դրամ:

**Պատճառաբանական եզրահանգումներ.** Գործունեության ենթակա տարածքը գտնվում է Գավառ քաղաքից դեպի արևելք՝ մոտ 3.6 կմ հեռավորության վրա՝ Արծվաքար բնակավայրի վարչական տարածքում՝ գործող ԿՄԿ-ի տարածքում:

Ներկայացվող կառույցի արդիականացման նպատակն է ապահովել տարածաշրջանի ջրային ռեսուրսների պահպանությունը համայնքի կեղտաջրերի ազդեցությունից, կատարելով կեղտաջրերի ավելի խորը մեխանիկական մաքրում:

Նախատեսվող գործունեության իրականացման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության փորձաքննության գործընթացն իրականացվել է օրենքի պահանջներին համապատասխան:

Գործունեությունն իրականացվելու է արդեն ազդեցության ենթարկված տարածքում: Շինարարության ընթացքում շրջակա միջավայրի բաղադրիչների վրա հնարավոր բացասական ազդեցությունները լինելու են նվազագույն՝ կրելով ժամանակավոր բնույթ, քանի որ աշխատանքներն իրականացվելու են 6 ամսվա ընթացքում:

Փորձաքննական գործընթացին ներգրավվել են շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները, առողջապահության, ներքին գործերի, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունները, ՀՀ ԳԱԱ Սևանա լճի պահպանության փորձագիտական





հանձնաժողովը, Գեղարքունիքի մարզպետարանը, Գավառի համայնքապետարանը, շահագրգիռ հանրությունը:

Փորձաքննական գործընթացում կատարվել են հաշվետվության լրամշակումներ, որտեղ հաշվի են առնվել ներկայացված առաջարկություններն ու դիտողությունները:

Օրենսդրությամբ սահմանված կարգով գնահատման և փորձաքննության բոլոր փուլերում Գեղարքունիքի մարզի Գավառի համայնքապետարանում իրականացվել են հանրային քննարկումներ, ինչի ընթացքում հանրությունը դրական է արտահայտվել նախատեսվող գործունեության վերաբերյալ:

### Փորձաքննական պահանջներ

- Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է հետևել գնահատման հաշվետվությունում ամրագրված բնապահպանական միջոցառումների կատարմանը, ժամանակացույցին, իսկ դրանց չբավարարման դեպքում նախատեսել լրացուցիչ միջոցառումներ՝ ուղղված բնապահպանական, հրդեհաանվտանգության և սանիտարական նորմերի պահպանմանը:

- Ծրագրի արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ է նախատեսել կեղտաջրերի վարակազերծում:

- Կոյուղու մաքրման կայանում առաջացած թափոնների հեռացումն իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, և ՀՀ կառավարության կողմից հաստատված ծրագրային փաստաթղթերին համապատասխան:

- Գործունեության հարակից տարածքներում ՀՀ Կարմիր գրքում գրանցված բույսերի և կենդանիների հայտնաբերման դեպքում՝ դադարեցնել աշխատանքները և տեղեկացնել լիազոր մարմին:

### ԵԶՐԱՓՈՒԿԻՉ ՄԱՍ

«Ջինջ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Գավառի կեղտաջրերի մեխանիկական մաքրման կայանի արդիականացման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն՝ փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն՝

Իսաչիկ Մարտիրոսյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի տեղակալ՝

Հերիքնազ Մկրտչյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխ. մասնագետ՝

Արմինե Վարդանյան